

2010թ. հունվար-մայիս ամիսների ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ
բնութագիրը

2010 թվականի հունվար-մայիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 299.1 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 309.9 մլրդ դրամ, որոնք ապահովել են կառավարության կողմից առաջին կիսամյակի համար հաստատված ծրագրի համապատասխանաբար 90.2 և 75.4 %-ը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 41.2%-ով, ծախսերի գծով՝ 36.3%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 22.2%-ով կամ 54.4 մլրդ դրամով: Ընդ որում, 22.8%-ով (51.9 մլրդ դրամով) ավելացել են հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 26.3%-ով կամ 3.7 մլրդ դրամով՝ այլ եկամուտները: Միևնույն ժամանակ, պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը նվազել են 46.9%-ով կամ 1.2 մլրդ դրամով:

Պետական բյուջեի եկամուտների 93.6%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 6%-ը՝ այլ եկամուտների, 0.4%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 7.7 մլրդ դրամ:

2010 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտներն ու պետական տուրքերը կազմել են 234.7 մլրդ դրամ և ապահովել առաջին կիսամյակում ծրագրված մուտքերի 91.7%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 24%-ով կամ 45.4 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի և եկամտահարկի աճով:

Հարկերի և տուրքերի 49.2%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 115.4 մլրդ դրամ և 38.3%-ով կամ 31.9 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից շուրջ 76.1 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 39.3 մլրդ դրամը՝ ներքին

շրջանառությունից: Մուտքերի աճ է արձանագրվել և՛ ՀՀ սահմանին հարկումից, և՛ ապրանքների ու ծառայությունների ներքին շրջանառությունից ստացվող մուտքերի գծով, ընդ որում, վերջիններիս աճի տեմպը գերազանցել է ներմուծումից ստացվող եկամուտների աճի տեմպին:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 7.3%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 17.2 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 12.4 մլրդ դրամ, որից շուրջ 5.7 մլրդ դրամ՝ մենզինի և դիզելային վառելիքի, 4.8 մլրդ դրամ՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 4.9 մլրդ դրամ, որից 2.4 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 9.4%-ով կամ 1.5 մլրդ դրամով:

2010 թվականի հինգ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 16.2%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 37.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 28.3 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 32.8%-ով կամ 7 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են ավելի քան 12.6 մլրդ դրամ՝ 28.5%-ով կամ 2.8 մլրդ դրամով գերազանցելով 2009 թվականի համապատասխան ցուցանիշը:

2010 թվականի հունվար-մայիս ամիսներին բյուջե են մուտքագրվել շուրջ 6.7 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով առաջին կիսամյակի համար ծրագրված մուտքերի 76.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն մնացել է գրեթե անփոփոխ: Գործունեության առանձին տեսակներից հունվար-մայիս ամիսների ընթացքում գանձված հաստատագրված վճարները կազմել են 8.8 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.8%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի

համապատասխան ցուցանիշի համեմատ նվազել է 4.2%-ով կամ 391.1 մլն դրամով: Մասնավորապես՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անկում արձանագրվել է հիմնականում առևտրի իրականացման վայր կազմակերպելու, առևտրի իրականացման վայրից դուրս գտնվող՝ խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու և ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության կազմակերպման համար գանձվող հաստատագրված վճարների գծով:

2010 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 3.2 մլրդ դրամ մնօգտագործման և մնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 73.9%-ով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 4.6 մլրդ դրամ այլ հարկեր: Մասնավորապես՝ ավելի քան 1.4 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 163.9 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 1.1 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 644.7 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 9.3 մլն դրամ՝ արտոնագրային վճարները, 678.3 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 13.5 մլն դրամ՝ ՀՀ հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար պետական բյուջեից իրականացվող վճարումները և 527.8 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն ավելացել է 60.2%-ով կամ 1.7 մլրդ դրամով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 45.2 մլրդ դրամ՝ 92%-ով կատարելով կիսամյակային

ծրագիրը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 16.8%-ով կամ 6.5 մլրդ դրամով: Հաշվետու ժամանակահատվածում պետական մյուլտի այլ եկամուտները կազմել են շուրջ 17.8 մլրդ դրամ և 83.1%-ով ապահովել առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից շուրջ 5.7 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 26.3%-ով կամ 3.7 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 4.2 անգամ կամ 4.8 մլրդ դրամով ավելացել են լիցենզիայի և այլ ֆինանսավարկային հաստատություններում մյուլտի ժամանակավոր ազատ միջոցների տեղափոխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, 2.9 անգամ կամ 726.6 մլն դրամով՝ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները: Միևնույն ժամանակ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական մյուլտի մուլտիպլիկատոր այլ եկամուտները նվազել են 1.9 մլրդ դրամով կամ 20.4%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2009 թվականի հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.1 մլրդ դրամ էր վճարվել ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման երրորդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից:

2010 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում արտաքին աղյուսակներից ստացվել են շուրջ 1.4 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ, որոնք մուլտիպլիկատորով են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար: Հաշվետու ժամանակահատվածում ստացվել է առաջին կիսամյակում ծրագրված դրամաշնորհների ընդամենը 27.3%-ը:

2010 թվականի հունվար-մայիս ամիսներին ՀՀ պետական մյուլտի միջոցների հաշիվն կատարվել են 309.9 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով կիսամյակային ծրագրի 75.4%-ը: Մասնավորապես՝ 284.7 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 25.2 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու ժամանակահատվածում 4.6 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշիվն: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական մյուլտի ծախսերն ավելացել են 11%-ով կամ 30.7 մլրդ դրամով: Աճը հիմնականում

պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, դրամաշնորհների, պետական պարտքի սպասարկման և այլ ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 284.7 մլրդ դրամ՝ 76.9%-ով կատարելով կիսամյակային ծրագիրը: Նախորդ տարվա հունվար-մայիս ամիսների համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 8.6%-ով կամ 22.5 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 26.9 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 1.8 մլրդ դրամը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են կիսամյակային ծրագրի համապատասխանաբար 77.4%-ը և 73.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատավարձի ծախսերն աճել են 7.2%-ով, իսկ սոցիալական ապահովության վճարները՝ 3%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական լիցենզիա օգտագործվել է 54.5 մլրդ դրամ, որի կիսամյակային ծրագիրը կատարվել է 72.2%-ով և 2.6%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 10.2 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով կիսամյակային ծրագրի 53.8%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 7.3 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 2.9 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 101.9%-ով կամ 5.1 մլրդ դրամով, ընդ որում, աճ է արձանագրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի գծով: Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական լիցենզիա տրամադրվել են շուրջ 7.1 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով կիսամյակային ծրագրի 81%-ը և 1.8%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: 34 մլրդ դրամ են կազմել պետական լիցենզիա տրամադրված դրամաշնորհները, որից 32.5 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 606.3 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին, 38.6 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Մասնավորապես՝ համայնքների լիցենզիաների համահարթեցման սկզբունքով տրամադրվել են 13.5 մլրդ դրամի դոտացիաներ՝ կազմելով առաջին կիսամյակի ծրագրի 83.3%-ը և 17.9%-ով գերազանցելով

նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Դրամաշնորհների կիսամյակային ծրագիրը ընդհանուր առմամբ կատարվել է 76.7%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 21.8%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական մյուջեի ընթացիկ ծախսերի 35.1%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են շուրջ 100 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 82%-ը: Մասնավորապես՝ 73.2 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները (82.4%), 26.8 մլրդ դրամ (81%)՝ նպաստները: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակների գծով մյուջեի ծախսերն ավելացել են 0.7%-ով, իսկ նպաստները՝ 10.4%-ով:

2010 թվականի հունվար-մայիս ժամանակահատվածում պետական մյուջեի միջոցներից 50.3 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 78.7%-ով ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը և 10.8%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2010 թվականի հունվար-մայիս ամիսներին պետական մյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 25.2 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 62.1%-ը՝ նախորդ տարվա 17 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ 25.7 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 22.9%-ով գերազանցելով 2009 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 545.7 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախորդ տարվա 3.9 մլրդ դրամի դիմաց:

2010 թվականի հունվար-մայիս ամիսներին ՀՀ պետական մյուջեն կատարվել է շուրջ 10.8 մլրդ դրամ պակասուրդով՝ առաջին կիսամյակում նախատեսված շուրջ 79.3 մլրդ դրամի և 2009 թվականի նույն ժամանակահատվածի 34.5 մլրդ դրամի դիմաց: Պակասուրդի ֆինանսավորման համար ներքին աղբյուրներից ներգրավվել է շուրջ 15.8 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակի ծրագրի 17.9%-ը, իսկ արտաքին աղբյուրները կազմել են -5.0 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 57%-ը: Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 5.5 մլրդ դրամ է կազմել փոխառու միջոցների զուտ մարումը, որից 4.7 մլրդ դրամն ուղղվել է գանձապետական պարտատոմսերին՝ առաջին կիսամյակի ծրագրով նախատեսված 13.1 մլրդ դրամ զուտ մուտքերի դիմաց: Մուրհակների մարման

նպատակով առաջին կիսամյակի ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 100%-ով՝ կազմելով 21.7 մլն դրամ: 772.8 մլն դրամ ուղղվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը: Անցած ժամանակահատվածում պակասուրդի ներքին ֆինանսական ակտիվները կազմել են 21.3 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակի համար ծրագրվածի 28.1%-ը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական մյուջեից տրամադրվել են 218.8 մլն դրամի վարկեր՝ կազմելով առաջին կիսամյակում նախատեսվածի 79.6%-ը: Նշված գումարից 175 մլն դրամն ուղղվել է Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող մասնավոր փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարկային ծրագրին՝ որպես կառավարության համաֆինանսավորում:

Առաջին կիսամյակում նախատեսված 73.5 մլրդ դրամի փոխարեն պետական մյուջեի ազատ միջոցներից անցած հինգ ամիսների ընթացքում օգտագործվել է ընդամենը 8.1 մլրդ դրամ: Շուրջ 13.5 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից (5.1 անգամ գերազանցելով տարեկան ծրագիրը), որի զգալի մասը վճարվել է «Հայռուսզազարդ» ԲԲԸ-ի կողմից:

Անցած ժամանակահատվածում պետական մյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -5.0 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 57%-ը: Մասնավորապես՝ անցած ժամանակահատվածում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրամադրվել են շուրջ 15.2 մլրդ դրամի վարկային միջոցներ: Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է 3.5 մլրդ դրամ, որից 2.4 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 119.1 մլն դրամ՝ ԳԶՄՀ նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 552.9 մլն դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և մաշխման համակարգի ծրագրի գծով ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 444.7 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 18.8 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը:

Անցած ժամանակահատվածում 14.7 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 44.8 մլն դրամի վճարում, որը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերին, սակայն

գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 713.2 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում 1.2 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղյուրներից ստացված դրամաշնորհային միջոցների մնացորդը: